

Գլուխ 18-րդ

Սանկտ-Պետերբուրգում ինձ ավելի երկար պահեցին, քան ես նախատեսել էի, և ես հեռացա այնտեղից միայն հոկտեմբերի 15-ին՝ բոլշևիկյան հեղափոխությունից մեկ շաբաթ առաջ: Այլևս այնտեղ անհնար էր մնալ: Ինչ-որ զգվելի և լսրծում բան էր ուրվագծվում մոտակայքում: Հիվանդագին ճնշումը և անխուսափելի ինչ-որ բանի ակնկալիքը զգացվում էր ամենուրեք: Ասեկոսենները տարածվում էին. ամեն մեկը ավելի անհեթեթ և հիմար, քան մյուսը: Ոչ ոք ոչինչ չէր հասկանում: Ոչ ոք չէր կարող պատկերացնել՝ ինչ է սպասվում ավելի ուշ: «Ժամանակավոր կառավարությունը», Կորնիլովին տապալելով, կազմակերպեց ամենահստակ բանակցությունները բոլշևիկների հետ, որոնք բացեիքաց ցույց էին տալիս, որ իրենց ընդհանրապես չեն հետաքրքրում «սոցիալիստական նախարարները» և միայն փորձում էին ժամանակ հաղթել: Գերմանացիները ինչ-որ պատճառով Սանկտ-Պետերբուրգի վրա չէին հարձակվում՝ չնայած, որ ճակատը բաց էր: Այժմ մարդիկ նրանց փրկարարներ էին համարում թե՛ «Ժամանակավոր կառավարությունից», թե՛ բոլշևիկներից: Ես համաձայն չէի գերմանացիների վրա հույս դնելու հանգամանքի հետ, քանի որ իմ կարծիքով այն, ինչ տեղի էր ունենում Ռուսաստանում բավականին դուրս էր եկել տիրապետության տակից:

Տուափսեում համեմատաբար հանգիստ էր: Պարսկաստանի շահի հանգստյան տանը սովետի ինչ-որ ներկայացուցիչ էր նստած, սակայն թալանը դեռ չէր սկսվել: Գ.-ն բնակվում էր Տուափսեից բավականին հարավ՝ Մոչիից մոտ 15 մղոն հեռավորության վրա: Նա վարձել էր ծովին նայող հանգստյան մի տուն այնտեղ, գնել էր մի երկու ձի և ապրում էր մարդկանց մի փոքր շրջանակում: Բոլորը միասին մոտ 10 մարդ էին այնտեղ հավաքված:

Ես նույնպես այնտեղ գնացի: Հրաշալի մի տեղ էր՝ վարդերով լի, մի կողմից ծովն էր երևում, մյուս կողմից՝ արդեն ձյունով ծածկված լեռների մի շղթա: Ես շատ էի ցավում մեր այն մարդկանց համար, ովքեր մնացել էին Մոսկվայում և Սանկտ-Պետերբուրգում:

Բայց իմ ժամանման հենց երկրորդ օրը ես նկատեցի, որ ինչ-որ բան սխալ է այնտեղ: Անգամ հետք չկար Եսսենտուկիի մթնոլորտից: Ես հատկապես ապշած էի Ջ.-ի դիրքորոշումից: Երբ ես գնացի Սանկտ-Պետերբուրգ սեպտեմբերի սկզբին Ջ.-ն լի էր խանդավառությամբ, նա շարունակաբար ինձ համոզում էր չմնալ Սանկտ-Պետերբուրգում, քանզի կարող է պայքարը շատ բարդանալ:

«Դու այլևս չե՞ս պատրաստվում երբևիցե Սանկտ-Պետերբուրգում լինել», - հարցրեցի ես նրան այդ պահին:

«Նա, ով բարձրանում է լեռներ, այլևս ետ չի վերադառնում», - պատասխանեց Ջ.-ն:

Եվ այժմ՝ իմ Ուխտ Դերե ժամանման մյուս օրը, ես լսեցի, որ նա պատրաստվում է վերադառնալ Սանկտ-Պետերբուրգ:

«Ինչու՞ նա պետք է այնտեղ ետ վերադառնար: Նա թողել էր իր աշխատանքը, ի՞նչ է պատրաստվում անել այնտեղ»:

«Ես չգիտեմ,- ասեց դոկտոր Ս.-ն, ով հենց հայտնել էր ինձ այդ լուրը,- Գ.-ն դժգոհ է նրանից և ասում է, որ ավելի լավ է գնա»:

Ինձ համար շատ դժվար էր անձամբ Ջ.-ին խոսեցնել: Նա բնականաբար ցանկություն չունեի բացատրելու, բայց նա ասեց, որ նա իրոք պատրաստվում է գնալ: Աստիճանաբար, մյուսներին հարցուփորձ անելով, ես բացահայտեցի, որ տարօրինակ բան է կատարվել: Շատ անհեթեթ վեճ է տեղի ունեցել Գ.-ի և ինչ-որ Լեթթերի՝ մեր հարևաններից մեկի միջև: Ջ.-ն ներկա էր դրան: Գ.-ին դուր չէր եկել Ջ.-ի ասածներից ինչ-որ բան, և այդ օրվանից նա միանգամայն փոխվել էր նրա նկատմամբ, չէր խոսում նրա հետ և, ընդհանուր առմամբ, նրան այսպիսի իրավիճակի մեջ էր դրել, որ Ջ.-ն ստիպված էր հայտարարել իր՝ հեռանալու վերաբերյալ որոշումը:

Ես սա համարում էի մաքուր հիմարություն: Այս ժամանակաշրջանում Սանկտ-Պետերբուրգ գնալը ինձ անհեթեթության գագաթնակետն էր թվում: Իսկական սով էր այնտեղ, չկառավարվող ամբոխներ, թալան և ոչ մի այլ բան: Այդ ժամանակ, իհարկե, մեզնից ոչ ոք չէր պատկերացնում, որ երբևիցե նորից չենք տեսնելու Սանկտ-Պետերբուրգը: Ես հույս ունեի գնալ այնտեղ գարնանը: Կարծում էի, որ մինչ այդ որևէ հստակություն կլինի: Բայց այժմ՝ ձմռանը, բավարար անմիտ էր թվում դա անելը: Ես կհասկանայի, եթե Ջ.-ն հետքքրքրված լիներ քաղաքականությամբ և ուսումնասիրեր տվյալ ժամանակահատվածի իրադարձությունները, սակայն, քանզի սա այդ դեպքը չէր, ես դա անելու համար որևէ շարժառիթ չէի տեսնում: Ես սկսեցի համոզել Ջ.-ին, որ սպասի, որոշումներ միանգամից չընդունի, խոսի Գ.-ի հետ և որևէ կերպ փորձի պարզաբանել իրավիճակը: Ջ.-ն ինձ խոստացավ չշտապել: Բայց ես տեսնում էի, որ նա իսկապես շատ տարօրինակ իրավիճակում է: Գ.-ն ամբողջովին արհամարհում էր նրան, և սա Ջ.-ի վրա ճնշող ազդեցություն էր գործում: Այսպես անցավ երկու շաբաթ: Իմ փաստարկներն ազդում էին Ջ.-ի վրա, և նա ասեց, որ կմնա, եթե Գ.-ն թույլ տա: Նա գնաց Գ.-ի հետ խոսելու, սակայն վերադարձավ շատ արագ՝ անհանգիստ դեմքով:

«Ե՛վ, ի՞նչ ասեց նա քեզ»:

«Ոչ մի առանձնահատուկ բան. Նա ասեց, որ եթե արդեն որոշել եմ գնալ, ավելի լավ է գնամ»:

Զ.-ն գնաց: Ես չէի կարողանում դա հասկանալ: Ես անգամ որևէ անձանոթի այդ ժամանակ չէի թողնի գնալ Սանկտ-Պետերբուրգ:

Գ.-ն պատրաստվում էր անց կացնել ձմեռը Ուլա Դերեում: Մենք ապրում էինք տարբեր տներում, որոնք գնվում էին հողի մի մեծ տարածքի վրա: «Աշխատանք» այն իմաստով, որը գոյություն ուներ Եսսենտուկիում, չկար: Մենք ծառեր էինք կտրում ձմռան վառելիքայտի համար, մենք վայրի տանձ էինք հավաքում, Գ.-ն հաճախ Մոչի էր գնում, որտեղ մեր մարդկանցից մեկը հիվանդանոցում էր, որը մինչ իմ ժամանելը որովայնաստիՖ էր ձեռք բերել Սանկտ-Պետերբուրգում:

Անսպասելիորեն Գ.-ն որոշեց տեղափոխվել այլ վայր: Նա գտնում էր, որ այստեղ մենք լիովին կկտրվենք ամեն տեսակի կապից Ռուսաստանի մյուս մասերի հետ և կմնանք առանց կերապահուստի:

Գ.-ն հեռացավ մեր խմբի կեսի հետ և այնուհետև ուղարկեց դոկտոր Ս.-ին մյուսների հետևից: Մենք նորից վերահաստատվեցինք Տուափսեում և այնտեղից սկսեցինք ծովափի երկայնքով էքսկուրսիաներ կազմակերպել դեպի հյուսիս, որտեղ երկաթգիծ չկար: Այս ճափորդություններից մեկի ընթացքում Ս.-ն հանդիպեց իր սանկտ-պետերբուրգյան ծանոթներից մեկին, ով հանգստյան տուն ուներ Տուափսեից քսանչորս մղոն հյուսիս: Մենք գիշերը նրանց հետ անցկացրեցինք, և մյուս առավոտ Գ.-ն տուն վարձեց նրանցից կես մղոն հեռու: Այստեղ նորից վերահաստատվեց մեր փոքր խումբը: Չորսը մեկնեցին Եսսենտուկի:

Այստեղ ապրեցինք երկու ամիս: Շատ հետաքրքիր ժամանակ էր: Գ.-ն, դոկտոր Ս.-ն և ես ամեն շաբաթ գնում էինք Տուափսե՝ մեզ համար կերապահուստ և ձիերի համար խար գնելու: Այս ճամփորդությունները միշտ կմնան իմ հիշողության մեջ: Նրանք լի էին ամենաանհավանական արկածներով և շատ հետաքրքիր զրույցներով: Մեր տունը նայում էր ծովին՝ մեծ Օլխնիկի գյուղից երեք մղոն հեռու: Ես հույս ունեի, որ այնտեղ կապրենք ավելի երկար ժամանակ: Դեկտեմբերի երկրորդ հատվածում լուրեր տարածվեցին, որ Կովկասյան բանակի մի մասը ոտքով շարժվում է դեպի Ռուսաստան՝ սևծովյան ափերի երկայնքով: Գ.-ն ասեց, որ կվերադառնանք Եսսենտուկի և կսկսենք թարմ աշխատանք: Ես առաջինը գնացի: Ես տարա մեր իրերի մի մասը Պետեգորսկ և վերադարձա: Հնարավոր էր տեղաշարժվել՝ չնայած Արմավիրում բռնկվելու կային:

Բռնկվելները, ընդհանուր առմամբ, շատացել էին հյուսիսային Կովկասում, և նրանց և կազակների միջև թշնամություն էր սկսվել: Միներալնի Վոդիում, երբ բոլորս անցնում էինք դրա միջով, ամեն ինչ անհավատալիորեն հանգիստ էր, սակայն շատ մարդկանց սպանություններ, որոնց հանդեպ բռնկվելները հակակրանք ունեին, արդեն տեղի էին ունեցել:

Գ.-ն մի մեծ տուն վաճեց Եսսենտուկիում և ուղարկեց պատվող նամակ փետրվարի 12-ի ամսաթվով՝ իմ ստորագրությամբ, մեր մոսկովյան և սանկտ-պետերբուրգյան բոլոր խմբերի անդամներին՝ հրավիրելով նրանց և իրենց մտերիմներին գալ ապրել և աշխատել իր հետ:

Արդեն սովը սկսված էր Մոսկվայում և Սանկտ-Պետերբուրգում, սակայն Կովկասում դեռ լռություն էր տիրում: Այս ամենի միջով անցնելը հեշտ չէր, և ոմանք չկարողացան՝ չնայած իրենց ցանկությանը: Բայց շատերը եկան: Ընհանուր առմամբ մոտ քառասուն մարդ դարձանք: Ջ.-ն, որին նույնպես նամակը ուղարկվել էր, եկավ: Նա ժամանեց քավականին հիվանդ վիճակում:

Փետրվարին, երբ մենք դեռ սպասում էինք, Գ.-ն մի անգամ ասեց, երբ նա ինձ ցույց էր տալիս տունն ու այն ամենը, ինչ կազմակերպել է. «Այժմ հասկանում եմ, թե ինչու էինք գումար հավաքում Մոսկվայում և Սանկտ-Պետերբուրգում: Դու այն ժամանակ ասում էիր, որ հազար ռուբլին չափազանց շատ է: Եվ արդյո՞ք այս գումարը բավարար կլինի: Մեկ ու կես մարդ վճարեց: Ես արդեն շատ ավելի եմ ծախսել, քան այն, ինչ հավաքվել էր»:

Գ.-ն մտադիր էր հողատարածք վարձել, մշակել խոհանոցային այգիներ, և ընդհանուր առմամբ նա ուզում էր աշխատանքային ճամբար կազմակերպել: Սակայն նրան խանգարեցին ամռան ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները:

Երբ մեր մարդիկ հավաքվեցին 1918թ.-ի մարտին, շատ խիստ կանոններ սահմանվեցին մեր տանը. արգելվում էր հեռանալ մեր տարածքից, օր ու գիշեր սանիտարներ էին նշանակվում և այլն: Եվ ամենաբազմազան աշխատանքը սկսվեց: Մեր տան և մեր կյանքերի կազմակերպման մեջ շատ հետքաքրություններ կային:

Այս ընթացքում վարժությունները շատ ավելի դժվար էին և բազմազան, քան անցած ամռան ընթացքում: Մենք սկսեցինք երաժշտական ուղեգրային վարժություններ, դերվիշի պարեր, տարբեր ձևերի մտավոր վարժություններ, տարբեր շնչելաձևերի ուսուցում և այլն: Հատկապես բարդ էին մտավոր երևույթների նմանակման վարժությունները, մտքի կարդալը, ներըմբռնումը, հոգևոր պատկերումները և այդպես շարունակ: Մինչ այս վարժությունների սկսելը, Գ.-ն մեզ բացատրեց, որ այս «հնարքների» ուսուցումը, ինչպես նա էր անվանում դրանք, բոլոր արևելյան դպրոցներում պարտադիր առարկա էր, քանզի առանց բոլոր հնարավոր կեղծիքները և նմանակումները սովորելու անհնար է սկսել գերնորմալ բնավորության երևույթի ուսուցումը: Մարդը կարող է իրականը կեղծիքից տարբերել այս բնագավառում միայն այն ժամանակ, երբ նա ճանաչում է և ինքնուրույն կարող է վերարտադրել բոլոր կեղծիքները: Բացի այդ Գ.-ն ասեց, որ այս «մտավոր հնարքների» գործնական ուսուցումը ինքնովին անփոխարինելի վարժություն էր՝ որոշակի

հատուկ առանձնահատկություններ զարգացնելու համար. դիտարկման սրությունը, խելամրությունը և հատկապես այլ առանձնահատկությունների լայնացման համար, որոնց համար սովորական մտավոր աշխարհում բառեր չկան, բայց որոնք հաստատ պետք է զարգացնել:

Բայց աշխատանքի մեծ մասը կապված էր երաժշտական ռիթմային վարժությունների հետ և նմանատիպ տարօրինակ պարերի հետ, որոնց հաջորդում էր տարբեր դերվիշների վարժությունների վերարտադրումը: Գ.-ն չէր բացատրել իր նպատակները և մտադրությունները, բայց իր նախկին ասածների համաձայն, կարելի էր մտածել, որ այս վարժությունների արդյունքում հնարավոր կլինի ֆիզիկական մարմինը հսկողության տակ պահել:

Բացի վարժություններից, պարերից, մարմնամարզությունից, զրույցներից, դասախոսություններից և տան աշխատանքից, կազմակերպվում էր նաև հատուկ աշխատանք առանց կարողությունների մարդկանց համար:

Ես հիշում եմ, որ, երբ մենք հեռանում էինք Ալեքսանդրապոլից դրա նախորդ տարին, Գ.-ն իր հետ վերցրել էր մի տուփ կաժ մետաքս, որը, ասեց, շատ էժան էր գնել՝ զեղչերի ժամանակ: Այս մետաքսը միշտ իր հետ ճանափարհորդում էր: Երբ մեր մարդիկ հավաքվեցին Եսսենտուկիում, Գ.-ն տվեց այս մետաքսը կանանց և երեխաներին՝ փաթաթելու մեր տանը գտնվող աստղաձև սպասալերի վրա: Հետո մեր մարդկանցից ոմանք, ովքեր վաճառականի տաղանդ ունեին վաճառեցին այս մետաքսը Պետեգորսկում, Կիսլավոդսկում և հենց Եսսենտուկիում գտնվող խանութներին: Դա հիշել է պետք: Ընդհանրապես որևէ իր չկար, խանութները դատարկ էին, և մետաքսը միազամից թոցրեցին, քանի որ այնպիսի իրերը, ինչպիսին են մետաքսը, բամբակը և այլն շատ դժվար էին ճարվում: Այս աշխատանքը շարունակվեց երկու ամիս, և ապահովում էր հստակ կանոնավոր եկամուտ համեմատած մետաքսի սկզբնական գնի հետ:

Նորմալ ժամանակներում մեր ճամբարի պես ճամբարը գոյություն չէր կարող ունենալ Եսսենտուկիում, ոչ էլ որևէ այլ տեղ Ռուսաստանում: Մենք պետք է որ հետաքրքրաշարժություն առաջացնեինք, ուշադրություն գրավեինք, ուստի կանությունը կհայտնվեր, ինչ-որ անախորժություն հաստատ տեղի կունենար, ամեն տեսակի մեղադրանքները կստեղծվեին դրանց ներկայությունից, մեզ հաստատ քաղաքական, աղանդային կամ հակաբարոյական ուղղվածություններ կվերագրվեին: Մարդիկ այդպես են ստեղծված, որոնք անհապաղորեն մեղադրանք են առաջ քաշում այն բաների նկատմամբ, ինչը չեն հասկանում: Սակայն այդ ժամանակ, այսինքն՝ 1918թ.-ին, նրանք, ովքեր մեզանով կհետաքրքրվեին, զբաղված էին իրենց անձնական մաշկը բոլշևիկներից փրկելով, իսկ բոլշևիկները դեռ բավարար հզոր

չէին այլ ուղղակի քաղաքական բնույթ չունեցող մասնավոր անձանց կամ կազմակերպությունների կյանքով հետաքրքրվելու համար: Եվ դա տեսնելով՝ մի շարք խմբեր և աշխատանքային ընկերակցություններ էին կազմակերպվել մայրաքաղաքից եկած մտավորականների միջև, որոնք ճակատագրի բերումով հայտնվել էին Միներալնի Վոդիում այդ ժամանակ. մեզ վրա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում:

Մի առիթով երեկոյան ընդհանուր զրույցի ժամանակ Գ.-ն ասեց, որ մենք պետք է անուն մտածենք մեր ճամբարի համար և ընդհանուր առմամբ օրինականացվենք: Սա պետեգորսկյան բոլշևիկների կառավարության ժամանակ էր:

«Մտածեք որևէ բան միևնույն ժամանակ Սադրուժեստովայի¹ և «աշխատանքով վաստակած»-ի կամ «միջազգային»-ի պես, - ասեց Գ.-ն,- ամեն դեպքում նրանք չեն հասկանա: Բայց նրանց համար անհրաժեշտ է մեզ ինչ-որ անուն տալ»:

Մենք հերթով սկսեցինք տարբեր անվանումներ առաջարկել:

Հանրային դասախոսություններ էին կազմակերպվում մեր տանը շաբաթը երկու անգամ, որոնց մարդկանց որոշակի թիվ էր հաճախում, և մեկ կամ երկու անգամ մենք մտավոր երևույթի նմանակման ցուցադրություններ կազմակերպեցինք, որոնք շատ հաջող չէին, քանի որ մեր հանրությունը շատ վատ է ընկալում հրահանգները:

Այնուամենայնիվ, իմ անձնական դիրքորոշումը Գ.-ի աշխատանքի վերաբերյալ փոխվում էր: Ամբողջ մի տարի ինչ-որ բան էր հավաքվում, և ես աստիճանաբար սկսեցի հասկանալ, որ կան ինձ համար անհասկանալի շատ բաներ, և որ *ես պետք է հեռանամ*:

Սա տարօրինակ և անսպասելի կարող է թվալ այն ամենից հետո, ինչ գրել եմ մինչ այժմ, բայց որոշումը աստիճանաբար էր հասունացել: Ես գրել էի, որ որոշ ժամանակ առաջ սկսել էի տարբերակել Գ.-ին և մտքերը: Ես ոչ մի կասկած չունեի մտքերի մասին: Ճիշտ հակառակը՝ որքան ավելի էի մտածում նրանց մասին, այդքան ավելի էի խորանում դրանց մեջ, այդքան ավելի էի դրանք գնահատում և հասկանում դրանց նշանակությունը: Սակայն ես լուրջ կասկածներ ունեի, թե արդյոք ինձ համար, կամ անգամ մեր խմբի մեծամասնության համար, հնարավոր է շարունակել աշխատել Գ.-ի առաջնորդության ներքո: Ես ընդհանրապես ի նկատի չունեմ, թե Գ.-ի գործողություններից կամ միջոցներից որոշները սխալ են կամ թե նրանք չէին համապատասխանել իմ սպասումներին: Դա տարօրինակ և լիովին անտեղիս կլիներ, եթե վերաբերեր աշխատանքային առաջնորդին, որի առանձնահատուկ բնույթը ես

¹ Սադրուժեստովա՝ մոտավորապես «Ընկերների միություն՝ որևէ նպատակի համար»

արդեն ընդունել էի: Մեկը մյուսին բացատրում է: Այս բնույթի աշխատանքում ոչ մի կարգի քննադատություն չի կարող լինել, ոչ մի կարգի անհամաձայնություն այս կամ այն անձի հետ: Հակառակը՝ ամբողջ աշխատանքը կայանում է նրանում, որ արվում է այն ամենը, ինչ մատնանշում է առաջնորդը՝ հասկանալով իրենց կարծիքներին համապատասխան անգամ այն բաները, որոնք պարզ չեն արվում՝ օգնելով նրան իր բոլոր գործերում: Այլ վերաբերմունք աշխատանքի նկատմամբ չի կարող լինել: Եվ հենց ինքը Գ.-ն մի քանի անգամ ասել է, որ աշխատանքում ամենակարևոր հիշելն է, որ այստեղ եկել ենք սովորելու, և ոչ մի այլ դեր մեզ վրա պետք չի վերցնել:

Միևնույն ժամանակ սա ընդհանրապես չի նշանակում, որ մարդ ընտրություն չունի կամ որ նա ստիպված է հետևել մի բանի, որը չի համապատասխանում իր փնտրածին: Գ.-ն ինքն ասեց, որ գոյություն չունի «ընդհանուր» դպրոց, որ ամեն «գուրու» կամ դպրոցի առաջնորդ աշխատում է իր անձնական մասնագիտացմամբ. մեկը՝ քանդակագործ է, մյուսը՝ երաժիշտ, երրորդը մեկ այլ բան է, և որ այդ գուրուի բոլոր աշակերտները պետք է յուրացնեն նրա մասնագիտացումը: Եվ սա ապացուցում է, որ ընտրությունը հնարավոր է այստեղ: Մարդը պետք է սպասի մինչև չհանդիպի այնպիսի գուրուի, որի մասնագիտացումը նա կարող է ուսուցանել, որը համապատասխանում է իր ճաշակին, ուղղվածություններին և կարողություններին:

Կասկած չկա, որ շատ հետաքրքիր ճաանապարհներ կային՝ ինչպես երաժշտությունը կամ քանդակը: Բայց հնարավոր չէ պատկերացնել, որ ամեն մարդուց պետք է պահանջվի ուսուցանել երաժշտություն կամ քանդակագործություն: Դպրոցային աշխատանքում անկասկած կան պարտադիր առարկաներ և, եթե կարող ենք այսպես ասել, օժանդակ առարկաներ, որոնց ուսուցումը առաջարկվում է միայն ինչպես պարտադիր առարկաների ուսուցման միջոց: Նաև դպրոցների մեթոդները կարող են շատ տարբեր լինել: Համաձայն մեթոդների երեք ուղղությունների կարող է կիրառվել կամ ֆակիլիի ուղղությանը, վանականի ուղղությանը կամ էլ յոգի ուղղությանը: Եվ իհարկե հնարավոր է, որ սկսնակը սխալներ թույլ կտա, կհետևի առաջնորդին այնպես, ինչպես երբևիցե չի հետևել որևէ մեկին: Պարզ է դառնում, որ առաջնորդի պարտականությունն է հետևել, որ սկսնակները, որոնց համար տվյալ ուսուցչի մեթոդները միշտ օտար, անհասկանալի և անհասանելի կմնան, չսկսեն աշխատանքը նրա հետ: Բայց եթե այսպես պատահում է, և եթե մարդը սկսում է աշխատել մի առաջնորդի հետ, որին չի կարողանում հետևել, ապա իհարկե, սա նկատելով և հասկանալով՝ նա պետք է գնա և փնտրի այլ առաջնորդ կամ պետք է աշխատի ինքնուրույն, եթե կարող է:

Ինչ վերաբերում է իմ՝ Գ.-ի հանդեպ ունեցած վերաբերմունքին, ես այդ ժամանակ պարզ տեսնում էի, որ շատ բաներում եմ սխալվել, ինչ վերագրում էի Գ.-ին,

և որ նրա հետ մնալով՝ ես նույն ուղղությամբ չեմ գնում, որով գնում էի սկզբում: Եվ ես կարծում էի, որ մեր փոքր խմբի բոլոր անդամները, շատ քիչ բացառություններով, նույն կամ նույնատիպ իրավիճակում էին:

Շատ տարօրինակ, սակայն լիովին ճիշտ դիտարկում էր: Ոչինչ չէի կարող ասել Գ.-ի մեթոդների մասին, բացի նրանից, որ ինձ հարմար չէին: Մտքիս մի շատ պարզ օրինակ եկավ: Ես երբևիցե բացասական վերաբերմունք չեմ ունեցել կրոնի հանդեպ՝ «վանականի ուղղության» մասին: Միևնույն ժամանակ ես երբևիցե չէի կարող մտացել, որ այդ ուղղությունը ինձ համար հնարավոր է կամ հարմար: Եվ այսպիսով, եթե երեք տարվա աշխատանքից հետո ես հասկացա, որ իրականում Գ.-ն մեզ տանում է դեպի կրոնի, վանքի ուղղությունը, և մեզնից պահանջում է բոլոր կրոնական ձևերի և արարողությունների պահպանում, պարզ է, որ կլինեի դրա հետ չհամաձայնվելու և հեռանալու շարժառիթ՝ անգամ վտանգելով կորցնել ուղիղ առաջնորդությունը: Եվ իհարկե, սա միևնույն ժամանակ չի նշանակում, որ ես ինքնին սխալ եմ համարում կրոնական ուղղությունը: Անգամ հնարավոր է ավելի ճիշտ ձև լինի այդ մեկը, քան իմը, բայց այդ ձևը իմը չէ:

Գ.-ի աշխատանքը և իրեն լքելու որոշումը ինձնից հսկայական ներքին պայքար էր պահանջում: Ես շատ բան էի կառուցել այդ ամենի վրա, և այժմ դժվար էր նորից ամեն ինչ սկզբից վերակառուցել: Բայց այլ ելք չկար: Իհարկե, այն ամենը, ինչ սովորել էի այդ երեք տարիների ընթացքում, ես պահպանեցի: Բայց մի ամբողջ տարի անցավ մինչև ես նորից մտա այս ամենի մեջ և մինչև հասկացա, որ հնարավոր է շարունակել աշխատել նույն ուղղությամբ, որով Գ.-ն էր աշխատում, սակայն անհատականորեն:

Ես առանձին տուն տեղափոխվեցի և նորից շարունակեցի Սանկտ-Պետերբուրգում լքված աշխատանքը՝ իմ գրքի վրա, որն այնուհետև կոչվեց *Տիեզերքի նոր մոդել*: «Տանը» դասախոսություններն ու ցուցադրումները դեռ շարունակվեցին որոշ ժամանակ, հետո դադարեցվեցին:

Երբեմն ես հանդիպում էր Գ.-ի հետ այգում կամ փողոցում, երբեմն նա գալիս էր իմ տուն: Սակայն ես խուսափում էի «Տուն» գնալուց:

Այդ ժամանակաշրջանում Հյուսիսային Կովկասում իրադարձությունները սկսեցին ավելի ու ավելի վատանալ: Մենք լիովին կտրված էինք Կենտրոնական Ռուսաստանից. մենք չգիտեինք՝ ինչ է կատարվում այնտեղ:

Ես սենտուկիի վրա առաջին կազակյան հարձակումից հետո իրավիճակը սկսվեց սրընթաց վատանալ, և Գ.-ն որոշեց լքել Միներալնի Վոդին: Նա չասեց, թե իրականում ուր է մտադիր գնալ, և դժվար էր կռահել՝ հաշվի առնելով ժամանակի հանգամանքները:

Այդ ժամանակ Միներալնի Վոդին լքած հասարակությունը փորձեց հասնել Նովորոսիյսկ, և ես կարծում եմ նա էլ կգնար այդ ուղղությամբ: Ես նույնպես որոշեցի լքել Եսսենտուկին: Սակայն ես չէի ուզում հեռանալ մինչև նրա գնալը: Սրա վերաբերյալ տարօրինակ զգացմունք ունեի. ուզում էի սպասել մինչև վերջ, անել ինձնից կախված ամեն բան, որպեսզի հետագայում կարողանայի ինքս ինձ ասել, որ ոչ մի հնարավորություն բաց չեմ թողել: Ինձ համար շատ դժվար էր հրաժարվել Գ.-ի հետ աշխատելու մտքից:

Օգոստոսի սկզբին Գ.-ն լքեց Եսսենտուկին: «Տանը» ապրողներից շատերը հեռացան նրա հետ: Մի քանի հոգի ավելի շուտ էին գնացել: Մոտ տաս մարդ մնաց Եսսենտուկիում:

Ես որոշեցի գնալ Նովորոսիյսկ: Սակայն հանգամանքները սկսեցին արագորեն փոխվել: Գ.-ի մեկնումից մոտ մեկ շաբաթվա ընթացքում անգամ մեզ ամենամոտիկ վայրերի հետ կապը խափանվեց: Կազակները սկսեցին հարձակվել Միներալնի Վոդիի սահմանագծերին, այնտեղ, որտեղ մենք էինք սկսվեցին բոլշևիկյան գողությունները, «բռնագրավումները» և այլն: Սա Պետեգորսկում պատանդների ոչնչացման ժամանակաշրջանն էր, երբ ոչնչացան Գեներալ Ռուսսկին, Գեներալ Ռադկո-Դիմիտրիևը և արքայազն Ուռուստովը և այլոք:

Ես պետք է խոստովանեմ, որ ինձ հիմարի դերում էի զգում: Ես արտերկիր չգնացի, երբ հնարավոր էր, որպեսզի Գ.-ի հետ աշխատեմ, և վերջնական արդյունքը այն էր, որ ես բաժանվեցի Գ.-ից և մնացի բոլշևիկների հետ:

Մեզնից նրանք, ովքեր ստիպված էին մնալ Եսսենտուկիում շատ դժվար ժամանակաշրջան էին ապրում: Իմ և իմ ընտանիքի համար ամեն ինչ համեմատաբար բարենպաստ էր թվում: Չորս հոգուց միայն երկուսը հիվանդացան տիֆով: Ոչ ոք չմահացավ: Ոչ մի անգամ մեզ չթալանեցին: Եվ ես միշտ ունեի աշխատանք և կարողանում էի փող աշխատել: Մյուսների համար շատ ավելի դժվար էր: 1919թ.-ի հունվարին Դենիկինի զորքի կազակները մեզ ազատ արձակեցին: Սակայն ես միայն մյուս` 1919թ.-ի ամռանը կարողացա հեռանալ Եսսենտուկիից:

Գ.-ի մասին մեր ունենաց նորությունները շատ սահմանապակ էին: Նա գնացքով Մայկոպ էր գնացել, և այնտեղից իր բոլոր ուղեկցորդների հետ ոտքով գնացել էր մի շատ հետաքրքիր, սակայն շատ բարդ ճանապարհով` լեռներով դեպի Սոչիի ծովը, որն այդ ժամանակ վրացիներն էին գրավել: Իրենց հետ տանելով իրենց ամբողջ ճամպուկը` նրանք քայլում էին` ամեն տեսակի արկածներով և տագնապներով, բարձր անցումներով, որտեղ ճանապարհներ չկային և որտեղով երբեմն որսորդներ էին անցնում: Եսսենտուկիից հեռանալուց մոտավորապես մեկ ամիս հետո միայն նրանք հասան Սոչի:

Սակայն ներքին իրավիճակը փոխվել էր: Սոչիում մեր խմբի մեծ մասը, ինչպես և ես ակնկալում էի, լքեց Գ.-ին: Նրանց շարքում էին նաև Պ.-ն և Զ.-ն: Միայն չորս հոգի մնացին Գ.-ի հետ, որոնցից միայն դոկտոր Ս.-ն էր սկզբնական սանկտ-պետերբուրգյան խմբից: Մյուսները միայն «երիտասարդ» խմբերում էին եղել: Փետրվարին Պ.-ն, ով հանգրվանել էր Մայկոպում Գ.-ի հետ բաժանվելուց հետո, եկավ Եսսենտուլի իր մոր ետևից, որն այնտեղ էր մնացել. հենց նրանից էլ իմացանք բոլոր մանրամասները Սոչի ճանապարհի և այնտեղ ժամանման մասին: Մոսկովյան մարդիկ գնացել էին Կիև: Գ.-ն իր չորս ուղեկիցներով գնացել էր Թիվլիս: Գարնանը իմացանք, որ նա շարունակում է աշխատանքը Թիվլիսում նոր մարդկանց հետ և նոր ուղղությամբ՝ հիմնվելով մեծամասամբ արվեստի վրա, այսինքն՝ երաժշտության, պարերի և ռիթմային վարժությունների վրա:

Զմռան վերջում, երբ ապրելու պայմանները մի քիչ ավելի թեթևացան, ես սկսեցի աչքի տակով անցկացնել իմ նշումները և Գ.-ի դիագրամների գծագրերը, որոնք պահել էի դեռ Սանկտ-Պետերբուրգից՝ Գ.-ի թույլտվությամբ: Իմ ուշադրությունը հատկապես գրավեց էննեագրամը: Պարզ էր, որ էննեագրամի բացատրությունը ավարտված չէր, և ես զգում էի, որ այն հնարավոր շարունակության համար հուշումներ է պարունակում: Ես շատ շուտով հասկացա, որ շարունակությունը կապված է «ցնցման» սխալ իրավիճակի հետ, որը էննեագրամում սկսվում էր սուլ-լա ինտերվալի ժամանակ: Այնուհետև ես իմ ուշադրությունը ուղղեցի մոսկովյան այն նշումների վրա, որոնք կապված էին էննեագրամի մեկնաբանությունների հետ: Այս նշումները «մթերքի դիագրամում» երեք օկտավաների՝ միմյանց վրա ունեցած ազդեցությունների մասին էին: Ես գծեցի դիագրամը, այնպես, ինչպես այն մեզ տրվել էր և տեսա, որ այն որոշ չափով «մթերքի դիագրամն» է ներկայացնում:

ԱՂՅՈՒՍԱԿ 59

3-րդ կետը կամ մի-ֆա «ինտերվալը» «ցնցման» գոյացման վայրն էր, որը ստեղծեց երկրորդ օկտավայի դո 192-ը: Երբ ես այս օկտավայի սկիզբը ավելացրեցի էննեագրամային, ես տեսա, որ 6-րդ կետում հայտնվեց երկրորդ օկտավայի մի-ֆա «ինտերվալը» և «ցնցումը»՝ երրորդ օկտավայի դո 48-ի տեսքով, որն այս կետում է սկսվում: Օկտավաների վերջնական գծագիրը հետևյալ ձևով ստացվեց՝

ԱՂՅՈՒՍԱԿ 60

Սա նշանակում էր, որ «ցնցման» համար սխալ վայր ընդհանրապես չկա: 6-րդ կետը ցույց էր տալիս «ցնցման»՝ երկրորդ օկտավա մուտքը, և «ցնցումը» դո-ն էր, որից սկիզբ էր առնում երրորդ օկտավան: Բոլոր երեք օկտավաները հասան H12-ին: Մեկում՝ սի-ն էր, երկրորդում՝ սուլ, և երրորդում՝ մի-ն: Երկրորդ օկտավան, որն ավարտվում էր 12-ում էննեագրամայում պետք է ավելի հեռվանար: Սակայն սի 12-ը և

մի 12-ը «հավելյալ ցնցում» էին պահանջում: Ես այդ ժամանակ շատ էի մտածում այս ցնցումների բնույթի մասին, բայց դրանց մասին ավելի ուշ կխոսեմ:

Ես զգացի, որ էննեագրամայում չափազանց շատ նյութ կար: 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ կետերը ներկայացնում էին, ըստ «մթերքի դիագրամի», օրգանիզմի տարբեր համակարգեր. 1-ինը՝ մարսողության համակարգը, 2-րդը՝ շնչառական համակարգը, 4-րդը՝ արյան շրջանառության համակարգը, 5-րդը՝ ուղեղը, 7-րդը՝ ողնաշարային պարանը, 8-րդը՝ կարեկցական համակարգը և սեռական օրգանները: Համաձայն սրա 1 4 2 8 5 7 1 ներքին գծերի ուղղությունը, այսինքն՝ 7-րդ կոտորակի բովանդակությունը, ցույց տվեց հոսանքի ուղղությունը կամ զարկերակային արյան բաշխումը օրգանիզմում և այնուհետև նրա՝ որպես երակային արյան վերադարձը: Հատկապես հետաքրքիր էր, որ վերադարձի կետը սիրտը չէր, այլ մարսողական համակարգը, որն իրականում հնարավոր էր, քանզի երակային արյունը առաջին հերթին խառնվում է մարսողության արտադրանքի հետ, այնուհետև այն հոսում է դեպի աջ նախասիրտը աջ սրտախորշի միջոցով, այնուհետև դեպի թոքերը՝ թթվածին կլանելու համար և այնտեղից հոսում է դեպի ձախ նախասիրտը և հետո ձախ սրտախորշը, հետո շնչերակի միջոցով դեպի զարկերակային համակարգը:

Էննեագրամը ավելի խորը ուսումնասիրելով՝ ես հասկացա, որ յոթ կետերը կարող են հնագույն աշխարհի յոթ մոլորակները խորհրդանշել. այլ կերպ ասած էննեագրամը կարող է աստղագիտական խորհրդանիշ լինել: Եվ երբ ես մոլորակները ըստ շաբաթվա օրերի կարգավորեցի, ես ստացա հետևյալ պատկերը՝

ԱՂՅՈՒՍԱԿ 61

Ես չփորձեցի ավելի խորանալ, քանի որ չունեի անհրաժեշտ գրքերը ձեռքիս տակ, և բացի այդ ժամանակը շատ քիչ էր:

«Միջոցառումները» ժամանակ չէին թողնում փիլիսոփայական շահարկումների համար: Պետք էր մտածել ապրուստի մասին, այսինքն՝ պարզապես պետք էր մտածել, որտեղ աշխատել և որտեղ ապրել: Հեղափոխությունը և դրա հետ կապված ամեն ինչ իմ մեջ արթնացնում էր խորը ֆիզիկական զզվանք: Միննույն ժամանակ չնայած իմ «սպիտակների» հանդեպ ունեցած համակրանքի, ես չէի կարող հավատալ իրենց հաջողությանը: Բոլշևիկները չէին հապաղում այնպիսի բաներ խոստանալ, որ ոչ իրենք, ոչ էլ որևէ այլ մեկը կարող էր անել: Հենց սրանում էր իրենց գլխավոր հզորությունը: Սրանում ոչ ոք չէր կարող նրանց հետ մրցակցել: Սրա հետ մեկ տեղ նրանք Գերմանիայի աջակցությունը ունեին, որոնք նրանց մեջ տեսնում էին վրեժխնդիր լինելու հնարավորություն ապագայում: Կամավորական բանակը, որը մեզ ազատել էր բոլշևիկներից, կարող էր կռվել նրանց հետ և հաղթել նրանց: Սակայն այն չէր կարողանում պատշաճ կերպով կազմակերպել ազատագրված տեղամասերի

կյանքը: Դրա առաջնորդները ոչ ծրագիր, գիտելիք ունեին, ոչ էլ այս բնագավորում որևէ փորձ: Իհարկե, սա չէր կարելի պահանջել նրանցից: Բայց փաստը մնում է փաստ: Իրավիճակը շատ անկայուն էր, և այդ ժամանակվա Մոսկվայի կողմ ընթացող ալիքը կարող էր ցանկացած օր նորից ետ ընթանալ:

Անհրաժեշտ էր արտասահման գնալ: Ես Լոնդոնը ընտրել էի ինչպես իմ վերջնական նպատակը: Առաջին հերթին այն պատճառով, քանի որ ավելի շատ մարդ էի ճանաչում այնտեղ, և երկրորդ հերթին՝ քանի որ կարծում էի, որ անգլիացիների միջև ես կգտնեմ ավելի շատ պատասխաններ և ավելի շատ հետաքրքրություն իմ նոր մտքերի վերաբերյալ, քան որևէ այլ տեղ: Բացի այդ, երբ Լոնդոնում էի Հնդկաստան գնալու ճանապարհին պատերազմից առաջ և երբ վերադառնում էի պատերազմի սկզբում, ես որոշել էի այնտեղ գրել և տպագրել իմ գիրքը, որը սկիզբ էր առել 1911թ.-ին *Աստվածների Բնասություն* վերնագրով, և որն այնուհետև լույս տեսավ *Տիեզերքի նոր մոդել* վերնագրով: Իրականում այս գիրքը, որտեղ ես խոսում էի կրոնի վերաբերյալ հարցերի մասին և, մասնավորապես, Նոր կտակարանի ուսումնասիրման նոր մեթոդների մասին, հնարավոր չէր տպագրել Ռուսաստանում:

Այսպիսով, ես որոշեցի գնալ Լոնդոն, փորձել Սանկտ-Պետերբուրգի նման դասախոսությունների խմբեր կազմակերպել այնտեղ: Այս ամենը տեղի ունեցավ միայն երեք ու կես տարի հետո:

1919թ.-ի հունիսի սկզբին ինձ վերջապես հաջողվեց հեռանալ Եսսենտուկիից: Այդ ժամանակ այն բավականին հանգիստ էր դարձել և կյանքն էլ փոքր-ինչ վերսկսվում էր: Սակայն ես չէի վստահում այս հանգստությանը: Անհրաժեշտ էր գնալ արտասահման: Սկզբում ես գնացի Ռոստով, հետո Եկատերինադոր և Նովորոսիյսկ, հետո նորից վերադարձա Եկատերինադոր: Այդ ժամանակ Եկատերինադորը Ռուսաստանի մայրաքաղաքն էր: Այնտեղ հանդիպեցի մեր խմբից որոշ մարդկանց, որոնք հեռացել էին Եսսենտուկիից ինձնից առաջ, ինչպես նաև հանդիպեցի որոշ ընկերներ և ծանոթներ Սանկտ-Պետերբուրգից:

Իմ հիշողության մեջ դեռ մնացել է իմ առաջին գրույցներից մեկը:

Երբ խոսում էինք Գ.-ի համակարգի և ինքդ քո վրա աշխատելու մասին, սանկտ-պետերբուրգյան ընկերներիցս մեկը ինձ հարցրեց, արդյոք ես կարող եմ մատնանշել այս աշխատանքի որևէ գործնական արդյունք:

Հիշելով այն ամենը, ինչ անցած տարվա ընթացքում վերապրել էի, հատկապես Գ.-ի հեռանալուց հետո՝ ես պատասխանեցի, որ մի տարօրինակ ինքնավստահություն եմ ձեռք բերել, մի վստահություն, որը չէի կարող մեկ բառով արտահայտել, սակայն պարտավոր էի բացատրել:

«Սա դասական իմաստով ինքնավստահություն չէ, - ասեցի ես, - ճիշտ հակառակը. ավելի շուտ ինքնության վերաբերյալ անկարևորության և աննշանակալիության վստահություն է, այն ինքնության, որին ճանաչում ենք: Բայց ես համոզված եմ նրանում, որ եթե ինչ-որ ահավոր բան տեղի ունենար ինձ հետ, ինչպիսիք եղան իմ ընկերներից շատերի հետ անցած տարվա ընթացքում, ապա *ես* չէի հաղթահարելու այդ դժվարությունները, իմ հասարակք «ես»-ը չէր լինելու հաղթահարողը, այլ մեկ այլ «ես» իմ ներսում, որը իրադրությանը համապատասխան կլիներ: Երկու տարի առաջ Գ.-ն հարցրեց ինձ, արդյոք ես զգում եմ նոր ես իմ ներսում, և ես պարտավոր էի պատասխանել, որ ոչ մի տարբերություն չեմ զգում: Այժմ կարող եմ այլ կերպ խոսել: Եվ կարող եմ բացատրել, թե ինչպես է տեղի ունենում փոփոխությունը: Այն միանգամից չի լինում, ես ի նկատի ունեմ, որ փոփոխությունը իր մեջ չի ներառում կյանքի ամեն մի վարկյան: Ամբողջ հասարակ կյանքը հասարակ ձևով առաջ է ընթանում, բոլոր այն հասարակ, փոքր, հիմար ես-երը նույնպես՝ հավանաբար սպասելով մի քանի այլ ես-ի, որոնք արդեն անհնարին են դարձել: Սակայն եթե ինչ-որ մեծ բան տեղի ունենար, մի բան, որի համար կպահանջվեր բոլոր նյարդերի լարում, ապա ես համոզված եմ, որ այս մեծ բանին կբախվեին ոչ թե հասարակ փոքր ես-երը, որն այժմ խոսում է և որին հեշտ է վախեցնել, այլ մեկ ուրիշ մեծ ես, որին ոչինչ չի վախեցնի և որն հավասարազոր կլինի այն ամենին, ինչ կկատարվի: Ավելի լավ չեմ կարող նկարագրել այն: Սակայն ինձ համար դա փաստ է: Եվ այս փաստը ինձ համար հստակորեն կապված է այդ աշխարհանքի հետ: Դու գիտես իմ կյանքը և գիտես, որ ես չէի վախենում և ներքուստ, և արտաքուստ այնպիսի բաներից, ինչից մարդիկ սովորաբար վախենում են: Սակայն սա մի այլ բան է, այլ համ: Հետևաբար ես ինքս իմ մեջ գիտեմ, որ այս նոր վստահությունը պարզապես կյանքի փորձի արդյունքում չի հայտնվել: Սա ինքս իմ վրա աշխատանքի արդյունքն է, որը ես սկսել եմ չորս տարի առաջ»:

Եկատերինոդարում և այնուհետև Ռոստովում ձմռան ընթացքում ես մի փոքր խումբ հավաքեցի և, հիմնվելով նախորդ ձմռան ընթացքում կատարած իմ աշխատանքների վրա, ես դասախոսություններ կարդացի նրանց համար՝ մեկնաբանելով Գ.-ի համակարգը, ինչպես նաև հասարակ կյանքից վերցրած բաներ, որոնք դրան էին բերում:

1919թ.-ի ամռան և ձմռան ընթացքում ես երկու նամակ ստացա Գ.-ից Եկատերինոդարում և Նովորոսիյսկում: Նա գրում էր, որ Թիֆլիսում բացել է «Մարդու ներդաշնակ զարգացման ինստիտուտ»՝ շատ լայն ծրագրով, նա նաև կցել էր այս «Ինստիտուտի» տեղեկագիրը, որն ինձ իրականում շատ մտահոգեց: Տեղեկագիրը այսպես էր սկսվում.

Ազգային կրթության նախարարության թույլտվությամբ Մարդու ներդաշնակ զարգացման ինստիտուտը, որը հիմնվում է Գ.Ի.Գ.-ի համակարգի վրա բացվում է Թիվլիսում: Ինստիտուտը ընդունում է և իզական, և արական սեռի երեխաների և չափահասների: Ուսումը տեղի կունենա առավոտյան և երեկոյան: Ուսուցման առարկաները հետևյալն են՝ բոլոր տեսակի մարմնամարզություններ (ռիթմային, բժշկական և այլն): Կամքի, հիշողության, ուշադրության, լսողության, մտածողության, հուզմունքի, բնագրի զարգացման վարժություններ և այլն:

Այս ամենին հետևում էր, որ Գ.Ի.Գ.-ի համակարգը արդեն լայնածավալ կիրառվում է մի շարք մեծ քաղաքներում՝ Բոմբեյում, Ալեքսանդրիայում, Կ Բաբուլում, Նյու Յորքում, Չիկագոյում, Քրիստիանիսայում, Ստոկհոլմում, Մոսկվայում, Եսսենտուկիում, և բոլոր իրական միջազգային և աշխատող եղբայրությունների վարչություններում և տներում:

Տեղեկագրի վերջում՝ Մարդու ներդաշնակ զարգացման ինստիտուտի “մասնագետ ուսուցիչների” ցանկում ես գտա իմ սեփական անունը, ինչպես նաև Մեխանիկական ինժեների անունը՝ Փ.-ինը, և բացի այդ մեր խմբից ևս մեկի անունը՝ Ջ.-ինը, ով այդ ժամանակ ապրում էր Նովորոսիյսկում և Թիֆլիս գնալու ոչ մի մտադրություն չունեի:

Գ.-ն գրում էր իր նամակում, որ իր “Կախարդների պայքարը” բալլետի նախապատրաստական աշխատանքներն է անում, և հին դժվարություններին առանց որևէ ակնարկ անելու, նա հրավիրում էր ինձ Թիվլիս՝ իր հետ աշխատելու: Սա նրան անչափ բնորոշ էր: Սակայն տարբեր պատճառներից ելնելով՝ ես չէի կարող գնալ: Առաջին հերթին կային էական նյութական խոչընդոտներ, և երկրորդ հերթին՝ Եսսենտուկիում ծառացած խնդիրները ինձ համար անչափ կարևոր էին: Գ.-ին լքելու իմ որոշումը ինձ վրա շատ թանկ նստեց, և ես չէի կարող այդ ամենը այդքան հեշտությամբ մոռանալ, ավելին ես տեսնում էի նրա բոլոր շարժառիթները: Պետք է խոստովանեմ, որ ես շատ լավատես չէի “Մարդու ներդաշնակ զարգացման ինստիտուտ”-ի ծրագրի նկատմամբ: Ես հասկանում էի, որ Գ.-ն, իհարկե, պետք է որոշակի արտաքին տեսք տար իր աշխատանքին՝ նկատի ունենալով արտաքին պայմանները. նույն բանը նա արել էր Եսսենտուկիում, սակայն այս արտաքին տեսքը նմանվում էր ծաղրանկարչության: Բայց ես նունպես հասկանում էի, որ այս ծաղրանկարի հետևում նույն բանն էր, որը չէր կարող փոխվել: Ես միայն կասկածում էի իմ՝ այս արտաքին տեսքին հարմարվելու կարողության վրա: Մինևնույն ժամանակ ես համոզված էի, որ շուտով նորից պետք է հանդիպեմ Գ.-ին:

Փ.-ն Մայկոպից Եկատերինոդար եկավ, և մենք միասին բավականին երկար զրուցեցինք համակարգի և Գ.-ի մասին: Փ.-ն բավականին բացասական

տրամադրություն ուներ: Սակայն ինձ թվում էր, որ իմ այն միտքը, որ պարտադիր էր տարբերակում մտցնել Գ.-ի և համակարգի միջև, նրան օգնեց ավելի լավ հասկանալ իրավիճակը:

Ես սկսում էի ավելի հետաքրքրվել իմ խմբերով: Տեսնում էի աշխատանքը շարունակելու հնարավորություն: Համակարգի մտքերը պատասխան էին գտնում և ակնհայտորեն համապատասխանում էին այն մարդկանց կարիքներին, ովքեր ուզում էին հասկանալ, թե ինչ է կատարվում և իրենց ներսում, և իրենց շուրջը: Եվ մեր շուրջը եզրափակվում էր ռուսական պատմության այն հակիրճ վերջաբանը, որն այդքան վախեցրել էր մեր ընկերներին և «դաշնակիցներին»: Մեր առջևում ամեն ինչ բավականին մութ էր: Ես աշնանը և ձմռան սկզբին Ռոստովում էի: Այնտեղ ես հանդիպեցի սանկտ-պետերբուրգյան խմբից ևս մի երկու-երեք հոգի, այդ թվում Ջ.-ին, որը Կիևից էր ժամանել: Ջ.-ն, ինչպես Փ.-ն շատ բացասական տրամադրություն ուներ կապված մեր ամբողջ աշխատանքի հետ: Մենք միասին բնակվեցինք միևնույն թաղամասում, և թվում էր, որ ինձ հետ վարած զրույցները նրան ստիպեցին շատ բաներ վերախմբավորել և համոզեցին նրան, որ սկզբնական գնահատումները ճիշտ էին: Նա որոշեց փորձել հասնել Գ.-ի մոտ Թիվլիս: Սակայն նրան վիճակված չէր իրականացնել այդ նպատակը: Մենք համարյա նույն ժամանակաշրջանում լքեցինք Ռոստովը՝ Ջ.-ն ինձանից մեկ կամ երկու օր անց, սակայն նա Նովորոսիյսկ արդեն հիվանդ ժամանեց և 1920թ.-ի հունվարի առաջին օրերին նա մահացավ ջրծաղիկից: Շուտով ինձ հաջողվեց գնալ Կոստանդնուպոլիս:

Այդ ժամանակ Կոստանդնուպոլիսը լի էր ռուսներով: Ես իմ սանկտ-պետերբուրգյան ծանոթներին հանդիպեցի և նրանց օգնությամբ ես սկսեցի դասախոսություններ կարդալ “Ռուսակի Միյակի” գրասենյակներում: Ես միանգամից բավականին մեծ լսարան հավաքեցի՝ բաղկացած մեծամասամբ երիտասարդ տղամարդկանցից: Ես շարունակում էի զարգացնել այն մտքերը, որոնք սկիզբ էին առել Ռոստովում և Եկատերինոդարում՝ կապակցելով հոգեբանության և փիլիսոփայության հիմնական մտքերը էզոթերիզմի մտքերի հետ:

Ես այլևս նամակ չստացա Գ.-ից, սակայն համոզված էի, որ նա կգա Կոստանդնուպոլիս: Նա եկավ հունիսին՝ բավականին մեծ խմբով:

Նախկին Ռուսաստանում, անգամ ամենախուլ արվարձաններում, աշխատանքը անհնարին էր դարձել, և մենք աստիճանաբար մոտենում էինք այն ժամանակաշրջանին, որը ես դեռ Սանկտ-Պետերբուրգում էի նախագուշակել՝ Եվրոպայում աշխատելու ժամանակաշրջանին:

Ես շատ ուրախ էի Գ.-ին տեսնել, և այդ ժամանակ ինձ թվում էր, որ ի օգուտ աշխատանքի բոլոր նախկին դժվարությունները կարելի է կողք դնել և որ ես նորից

կարող եմ նրա հետ աշխատել ինչպես Սանկտ-Պետերբուրգում: Ես Գ.-ին իմ դասախոսություններին բերեցի և նրան հանձնեցի բոլոր այն մարդկանց, ովքեր հաճախում էին իմ դասախոսությունները, մասնավորապես մոտ երեսուն հոգանոց փոքր խումբը, որը հանդիպում էր վերևում՝ «Միյակի» գրասենյակներում:

Գ.-ն այդ ժամանակ իր աշխատանքի հիմնական մասն էր համարում բալլետը: Բացի այդ նա ցանկանում էր շարունակել իր թիվլիսյան ինստիտուտը Կոստանդնուպոլսում: Այն պետք է լիներ հիմնականում պարերի և ռիթմային վարժությունների խմբակ, որը կպատրաստեր մարդկանց բալլետ պարելու: Համաձայն իր մտքերի բալլետը պետք է դպրոց դառնար: Ես զարգացնում էի բալլետի սցենարը նրա համար և սկսում էի այս միտքը ավելի լավ հասկանալ: Բալլետի պարերը և բոլոր մյուս «համարները», կամ ավելի ճիշտ ուրվագծերը, պահանջում էին երկար և ամբողջովին յուրահաստուկ պատրաստություն: Մարդիկ, ում պատրաստում էին բալլետին և ովքեր մասնակցում էին դրան հենց դրանով հանդերձ ստիպված կլինեին սովորել և իրենց վրա հսկողություն ձեռք բերել՝ այսպիսով մոտենալով գիտակցման գերագույն ձևերի բացահայտմանը: Բալլետը, ինչպես պարտադիր մաս, իր մեջ ներառում էր պարեր, վարժություններ և դերվիշների տարբեր արարողություններ, ինչպես նաև քիչ ճանաչված արևելյան պարեր:

Ինձ համար շատ հետաքրքիր ժամանակ էր: Գ.-ն հաճախ ինձ այցելում էր Պրինկիպոյում: Մենք միասին զբոսնում էինք Կոստանդնուպոլսի բազարներում: Մենք գնացինք Մեհլիսի դերվիշների մոտ, և նա ինձ մի բան բացատրեց, որը նախկինում ես անկարող էի հասկանալ: Եվ դա այն էր, որ Մեհլիսի դերվիշների պտույտը ուղեղի համար վարժություն էր՝ հիմնված հաշվարկի վրա, այն վարժությունների պես, որոնք նա մեզ Եսսենտուկիում ցույց էր տվել: Երբեմն նրա հետ աշխատում էինք օր ու գիշեր: Այս գիշերներից հատկապես մեկը իմ հիշողության մեջ է, երբ մենք թարգմանեցինք դերվիշյան մի երգ “Կախարդների պայքար”-ի համար: Ես ճանաչեցի Գ. արվեստագետին և Գ. բանաստեղծին, որոնց նա շատ խորը թաքցրել էր իր մեջ, հատկապես վերջինիս: Այս թարգմանությունը հետևյալ ձևը ստացավ. Գ.-ն վերհիշում էր պարսկական բանաստեղծություններ՝ երբեմն ցածր ձայնով կրկնելով իր համար, և հետո դրանք թարգմանում էր ինձ համար ռուսերեն: Մոտ տանսհինգ բուպե անց, երբ ես լիովին անհետացել էի ձևերի, խորհրդանիշների և նմանակումների ներքո, նա ասեց. «Ահա, հիմա այդ ամենից մեկ գիծ ստեղծիր»: Ես չէի փորձում որևէ չափ ստեղծել կամ ռիթմ գտնել: Միանգամայն անհնար էր դա: Գ.-ն շարունակեց և նորից մոտ տասնհինգ բուպեից ասաց. «Ահա և մեկ այլ գիծ»: Մենք նստեցինք մինչև առավոտ: Կուրբարաջի փողոցի վրա էինք՝ նախկին ռուսական հյուպատոսությունից մի փոքր ներքև: Քաղաքը իր երկայնքով սկսեց արթնանալ: Ես,

կարծում եմ, հինգ բանաստեղծություն էի գրել և կանգ էի առել հինգերորդ բանաստեղծության վերջին տողի վրա: Ոչ մի տեսակի ջանք այլևս չէր կարող ստիպել իմ ուղեղին նորից միանալ: Գ.-ն ծիծաղում էր, սակայն նա նույնպես հոգնած էր և չէր կարող շարունակել: Այսպիսով, բանաստեղծությունը մնաց այնպես, ինչպես կար՝ չավարտված, քանի որ նա երբեք այլևս չվերադարձավ այդ երգին:

Այսպես անցավ երկու-երեք ամիս: Ես օգնում էի Գ.-ին ինչպես կարող էի՝ իր Ինստիտուտը կազմակերպելու գործում: Սակայն աստիճանաբար իմ առջև ծառայացան նույն եսսենտուկյան դժվարությունները: Եվ այդ պատճառով, երբ Ինստիտուտը բացվեց, կարծում եմ հոկտեմբերին, ես անկարող էի միանալ դրան: Բայց որպեսզի չխոչընդոտեմ Գ.-ին և տարածայնություններ չառաջացնեմ իմ դասախոսություններին հաճախողների միջև, ես վերջ դրեցի իմ անձնական դասախոսություններին և դադարեցի հաճախել Կոստանդնուպոլիս: Իմ դասախոսությունները հաճախողներից մի քանիսը ինձ այցելում էին Պրինկիպոյում, և այնտեղ մենք շարունակում էինք Կոստանդնուպոլիսում սկսված գրույցները:

Երկու ամիս անց, երբ Գ.-ի աշխատանքը արդեն ամրապնդվել էր, ես նորից սկսեցի դասախոսություններ տալ «Միյակում»՝ Կոստանդնուպոլիսում, և դրանք շարունակվեցին ևս վեց ամիս: Ես ժամանակ առ ժամանակ այցելում էի Գ.-ի Ինստիտուտը, երբեմն էլ նա էր գալիս ինձ մոտ Պրինկիպո: Մեր ներքին հարաբերությունները մնացին շատ բարյացակամ: Գարնանը նա ինձ առաջարկեց դասախոսություններ տալ իր Ինստիտուտում, և ես սկսեցի դասախոսություններ կարդալ այնտեղ շաբաթը մեկ անգամ, որոնց հենց ինքը Գ.-ն էլ էր մասնակցում՝ լրացնելով իմ բացատրությունները:

Ամռան սկզբում Գ.-ն փակեց իր Ինստիտուտը և գնաց Պրինկիպո: Մոտավորապես այս ժամանակաշրջանում ես մանրամասնորեն պատմեցի նրան իմ մի գրքի նախագծի մասին, որը կանդրադառնար նրա սանկտ-պետերբուրգյան դասախոսություններին և գրույցներին՝ ներառելով իմ անձնական դիտարկումները: Նա համաձայնվեց այս պլանի հետ և լիազորեց ինձ այն գրել և տպագրել: Մինչ այդ ես գործածում էի Գ.-ի աշխատանքին վերաբերող ընդհանուր կանոնը, որը պարտադիր էր բոլորի համար: Համաձայն այս կանոնի ոչ ոք իրավունք չունեցրեց գրել իր կամ իր մտքերի կամ աշխատանքի այլ մասնակիցների հետ կապված որևէ բան, կամ նամակներ և նշումներ պահել (եղ չասած որևէ բան տպագրել)՝ անգամ իր անձնական օգտագործման համար: Առաջին տարիների ընթացքում Գ.-ն ուժեղ պնդում էր այս կանոնի պարտադիր լինելը, և ենթադրվում էր, որ աշխատանքում ընդգրկվածներից բոլորը պետք է խոսք տային ոչինչ չգրել (բնականաբար ոչինչ չտպագրել)՝ հղում

կատարելով Գ.-ին առանց հատուկ թույլտվության՝ անգամ եթե լքում են աշխատանքը և Գ.-ին:

Սա հիմնարար կանոններից մեկն էր: Ամեն մի նոր մարդ, ով մեզ միանում էր, այս կանոնի մասին գիտեր. այն համարվում էր հիմնարար և պարտադիր: Սակայն հետո Գ.-ն իր աշխատանքում ընդգրկում էր այնպիսի մարդկանց, ովքեր այս կանոնին ուշադրություն չէին դարձնում կամ չէին ցանկանում ընդունել այն: Սա բացատրում է Գ.-ի աշխատանքի տարբեր պահերի նկարագրումների հետագա հայտնությունը:

1921թ.-ի ամառը ես անցկացրեցի Կոստանդնուպոլսում և օգոստոսին գնացի Լոնդոն: Իմ մեկնումից առաջ Գ.-ն ինձ առաջարկեց գնալ իր հետ Գերմանիա, որտեղ նա նորից պատրաստվում էր բացել իր Ինստիտուտը և պատրաստել իր բալլետը: Բայց առաջին հերթին ես չէի հավատում, որ հնավարոր է Գերմանիայում աշխատանք կազմակերպել, և երկրորդը՝ ես չէի հավատում, որ ես կարող եմ աշխատել Գ.-ի հետ: Իմ Լոնդոն ժամանելուց հետո շուտով ես սկսեցի դասախոսություններ տալ՝ շարունակելով Կոստանդնուպոլսում և Եկատերինոպարում սկսված աշխատանքը: Ես իմացա, որ Գ.-ն գնացել է Գերմանիա՝ իր թիվիսյան խմբով և կոնստանդնուպոլսյան իմ մարդկանցից ոմանց հետ, որոնք հետևել են իրեն: Նա փորձեց աշխատանքը կազմակերպել Բեռլինում և Դրեզդենում և մտադիր էր գնել Դրեզդենի մոտ Հելերանում գտնվող նախկին Դալկրոգ Ինստիտուտի բնակարանները: Բայց այդ ամենից ոչինչ չստացվեց, և ինչ կապված է վերոնշյալ գնումների հետ, որոշ տարօրինակ իրադարձություններ տեղի ունեցան, որոնք ավարտվեցին դատական վարույթներով: 1922թ.-ի փետրվարին Գ.-ն եկավ Լոնդոն: Ես միանգամից նրան հրավիրեցի իմ դասախոսություններին, ինչպես դասընթացի մաս, և ներկայացրեցի նրան բոլորին, ովքեր հաճախում էին դասընթացները: Այս անգամ նրա հանդեպ ես ունեի շատ ավելի հստակ վերաբերմունք: Ես դեռ շատ ավելին էի ակնկալում իր աշխատանքից և որոշեցի անել այն ամենը, ինչ կարող եմ՝ նրան օգնելու Ինստիտուտը կազմակերպել և պատրաստել իր բալլետը: Բայց ես չէի հավատում, որ ինձ համար հնարավոր կլինի Գ.-ի հետ աշխատել: Ես նորից տենտում էի բոլոր նախկին խոչընդոտները, որոնք սկսել էին Եսսենտուկիում: Այս անգամ նրանք հայտնվել էին անգամ իր ժամանելուց առաջ: Արտաքին իրավիճակը այն էր, որ Գ.-ն շատ բան էր արել իր նախագծերին հասնելու համար: Գլխավորն այն էր, որ որոշակի տեսակի մարդիկ՝ մոտ քսան հոգի, նախապատրաստվել էին, որոնց հետ հնարավոր էր սկսել: Բալլետի երաժշտությունը համարյա ամբողջովին պատրաստ էր (հայտնի երաժշտի համագործակցությամբ): Ինստիտուտի կազմակերպումը մշակված էր: Սակայն այս ամենը գործի դնելու համար գումար չկար: Իր ժամանումից որոշ ժամանակ անց Գ.-ն ասեց, որ մտածում է իր Ինստիտուտը բացել Անգլիայում: Իմ

դասախոսություններին հաճախողներից շատերը հետաքրքրվեցին այս մտքով և կազմակերպեցին բաժանորդագրում իրենց շրջանակներում՝ բիզնեսի նյութական մասը ծածկելու նպատակով: Որոշակի գումար միանգամից տրվեց Գ.-ին՝ իր ամբողջ խումբը Անգլիա տեղափոխելու համար: Ես շարունակեցի իմ դասախոսությունները՝ նրանք համակցելով Գ.-ի ասածների հետ Լոնդոնում գտնվելու ժամանակաշրջանում: Բայց ես ինքս ինձ համար որոշել էի, որ եթե Ինստիտուտը բացվի Լոնդոնում, ես կգնամ կամ Փարիզ, կամ Ամերիկա: Ինստիտուտը վերջապես բացվեց Լոնդոնում, սակայն, տարբեր պատճառներից ելնելով, տապալվեց: Սակայն իմ Լոնդոնյան ընկերները և նրանք, ովքեր հաճախում էին իմ դասախոսությունները հավաքեցին էական գումար նրա համար, և դրանով Գ.-ն գնեց Ֆոնտենբլոյին մոտ Կ Էյվոնում գտնվող պատմական Շատո Պոլիոդեն՝ հսկայական բարձիթողի այգով, և 1922թ.-ի աշնանը նա բացեց իր Ինստիտուտն այնտեղ: Շատ խայտաբղետ խումբ էր հավաքվել այնտեղ: Որոշակի քանակով մարդիկ կային, ովքեր դեռ հիշում էին Սանկտ-Պետերբուրգը: Կային Գ.-ի թիվլիսյան աշակերտներից: Կային մարդիկ, ովքեր հաճախել էին իմ դասախոսությունները Կոստանդնուպոլսում և Լոնդոնում: Վերջիններս բաժանվեցին տարբեր խմբերի: Իմ կարծիքով շատերը շտապեցին՝ թողնելով իրենց առօրյա զբաղմունքը Անգլիայում՝ Գ.-ին հետևելու նպատակով: Ես ոչինչ չէի կարող նրանց ասել, քանի որ նրանք արդեն կայացրել էին իրենց որոշումները, երբ ինձ տեղեկացրեցին դրա մասին: Ես վախենում էի, որ նրանք հիասթափություն կապրեն, քանի որ Գ.-ի աշխատանքը ինձ ոչ բավարար ճիշտ կազմակերպված էր թվում, և հետևաբար անկայուն: Բայց այդ ժամանակ ես չէի կարող համոզված լինել իմ անձնական մտքերում և չէի ուզում միջամտել, քանի որ եթե ամեն ինչ լավ ստացվեր և իմ վախերը սխալ դուրս գային, ապա նրանք անկասկած կշահեին իրենց որոշումից:

Մյուսները փորձեցին աշխատել ինձ հետ, բայց այս կամ այն պատճառով հեռացան ինձանից և այժմ կարծում էին, որ իրենց համար ավելի հեշտ կլիներ աշխատել Գ.-ի հետ: Նրանց հատկապես գրավում էր այսպես կոչված *կարճ կտրվածքը* գտնելու միտքը: Երբ նրանք հարցրեցին իմ խորհուրդը դրա հետ կապված, ես իհարկե նրանց խորհուրդ տվեցի գնալ Ֆոնտենբլո և աշխատել Գ.-ի հետ: Եվ այլոք նույնպես ժամանակավոր գնում էին Գ.-ի մոտ՝ երկու շաբաթով, մեկ ամսով: Սրանք այն մարդիկ էին, որոնք հաճախել էին իմ դասախոսությունները և որոնք չէին ուզում որոշում կայացնել, սակայն երբ լսում էին այլ մարդկանց որոշման մասին, գալիս էին ինձ մոտ և հարցնում, արդյոք նրանք չպետք է “թողնեն ամեն ինչ” և գնան Ֆոնտենբլո և արդյոք սա աշխատանքը շարունակելու միակ ձևն էր: Սրան ես պատասխանում էի, որ նրանք պետք է սպասեն մինչև ես այնտեղ լինեմ:

Ես առաջին անգամ ժամանեցի Շատո Պղիողե 1922թ.-ի հոկտեմբերի վերջին կամ նոյեմբերի սկզբին: Շատ հետաքրքիր և շարժուն աշխատանք էր ընթանում այնտեղ: Պարերի և վարժությունների համար բեմահարթակ էր կառուցվել, տնային տնտեսությունը կազմակերպված էր, տունը ավարտված էր և այլն: Եվ ընդհանուր առմամբ մթնոլորտը շատ ճիշտ էր և ինձ վրա ուժեղ տպավորություն թողեց: Ես հիշում եմ մի գրույց օրիորդ Կեթրին Մենսֆիլդի հետ, որն այդ ժամանակ այնտեղ էր ապրում: Սա իր մահից ամենաշատը երեք շաբաթ առաջ էր: Ես ինքս էի նրան Գ.-ի հասցեն տվել: Նա իմ դասախոսություններին եղել էր երկու կամ երեք անգամ, այնուհետև եկել էր ինձ մոտ՝ ասելու, որ գնում է Փարիզ: Մի ռուս բժիշկ թոքախտ էր բուժում՝ ռենտգենով ճառագայթելով փայծախը: Իհարկե ոչինչ դրա մասին չէի կարող նրան ասել: Նա արդեն կիսով չափ մահացած էր ինձ թվում: Եվ ես կարծում էի, որ նա դա լիովին գիտակցում էր: Բայց այս ամենով հանդերձ, նրանում ինչ-որ մեկը դեռ պայքարում էր՝ անգամ այս վերջին օրերը լավագույնս օգտագործելու համար, ճշմարտությունը գտնելու համար, որի ներկայությունը նա հստակ զգում էր, բայց անկարող էր այն շոշափել: Ես չէի մտածում, որ նրան նորից կտեսնեմ: Սակայն ես չէի կարող մերժել նրան, երբ նա հարցրեց Փարիզում իմ ընկերների հասցեն, այնպիսի մարդկանց հասցե, որոնց հետ նա կկարողանար խոսել նույն երևույթների մասին, որոնց մասին ինձ հետ էր խոսում: Եվ այսպես, ես նորից նրան հանդիպեցի Պղիողեում: Երեկոյան մենք նստել էինք սենյակներից մեկում, և նա խոսում էր տկար ձայնով, որը թվում էր դատարկությունից էր գալիս, սակայն տհաճ չէր:

«Ես գիտեմ, որ սա ճշմարիտ է և որ այլ ճշմարտություն չկա: Դու գիտես, որ ես երկար ժամանակ հետևել եմ մեզ բոլորիս առանց բացառությունների, ինչպես մարդիկ, որոնք նավաբեկություն են ապրել և ընկել են անմարդաբնակ կղզի, սակայն դեռ չգիտեն դրա մասին: Իսկ այս մարդիկ այստեղ գիտեն դա: Մյուսները այնտեղ՝ կյանքում, դեռ մտածում են, որ շոգենավը վաղը կգա իրենց հետևից և որ ամեն ինչ կշարունակվի հին ձևով: Այնքան ուրախ եմ, որ կարող եմ այստեղ լինել»:

Շուտով՝ իմ Լոնդոն վերադառնալուց հետո, իմացա նրա մահի մասին: Գ.-ն նրան շատ լավ էր վերաբերվում, նա չէր պնդում, որ նա հեռանա՝ չնայած այն փաստին, որ նա ակնհայտորեն չէր ապրելու: Սրա համար ժամանակի ընթացքում ստացավ գրապարտության և ստի իրեն հասանելիք չափը:

1923թ.-ի ընթացքում ես բավականին հաճախ գնում էի Ֆոնտենբլո, այսինքն՝ Պղիողե:

Իր բացումից հետո շատ շուտով Ինստիտուտը գրավեց մամուլի ուշադրությունը, և մեկ կամ երկու ամսվա ընթացքում ֆրանսիական և անգլիական թերթերը ակտիվորեն գրում էին դրա մասին: Գ.-ին և իր աշակերտներին

«անտառային փիլիսոփաներ» էին անվանում, նրանցից հարցազրույց էին վերցրել, նրանց նկարները հրապարակվել էին և այդպես շարունակ:

Գ.-ի անձնական աշխատանքը այս ժամանահատվածում՝ 1922թ.-ից սկսած, նվիրված էր հիմնականում ռիթմի և պլաստիկայի ուսուցման մեթոդների զարգացմանը: Նա երբեք չէր ընդհատում իր՝ բալլետի վրա աշխատելը՝ դրանում ներառելով տարբեր դերվիշների և Սուֆիսների պարեր և վերհիշելով Ասիայում շատ տարիներ առաջ իր լսած երաժշտությունը: Այս աշխատանքը չափազանց նոր և հետաքրքիր էր: Դերվիշների պարերն ու երգերը առանց կասկածի առաջին անգամ էին վերարտադրվում Եվրոպայում: Եվ բոլոր նրանց վրա, ովքեր լսում և տեսնում էին այն, դրանք մեծագույն տպավորություն էին թողնում:

Պղիողեում նրանք նաև շատ բարդ մտավոր աշխատանքներ էին տանում՝ հիշողության, ուշադրության և երևակայության զարգացման ուղղությամբ, և այնուհետև այս վարժությունների հետ կապված «մտավոր երևույթի նմանակում» էին կատարում: Բացի այդ, տնային տնտեսության հետ բավականին պարտադիր աշխատանք կար բոլորի համար, որը լարվածություն էր պահանջում աշխատանքի արագության և տարբեր այլ պայմանների պատճառով:

Այդ ժամանակվա զրույցներից ես հիշում եմ հատկապես մեկը, որը վերաբերում էր շնչառական մեթոդներին: Եվ չնայած այս զրույցը և շատ այլ բաներ, որոնք տեղի էին ունենում, անցնում էին աննկատ, այն ցույց տվեց միանգամայն թարմ տեսակետի հնարավորությունն ավյալ թեմայի հետ կապված:

«Ճիշտ վարժությունները, - մի անգամ ասեց Գ.-ն, - որոնք ուղղակիորեն բերում են օրգանիզմը տիրապետելու նպատակին և պայմանավորում են դրա գիտակից կամ անգիտակից գործողությունները կամքի հետ, սկսվում են շնչառական վարժություններից: Առանց շնչառությանը տիրապետելուց ոչինչ հնարավոր չէ անել: Միննույն ժամանակ շնչառությանը հեշտ չէ տիրապետել:

Դուք պետք է հասկանաք, որ կա շնչառության երեք տեսակ: Մեկը՝ նորմալ շնչառությունն է: Երկրորդը՝ ինֆլացիան: Երրորդը՝ շարժումներով համակցված շնչառությունը: Ի՞նչ է դա նշանակում: Դա նշանակում է, որ նորմալ շնչառությունը տեղի է ունենում անգիտակցաբար, այն ղեկավարվում և հսկվում է շարժման կենտրոնի կողմից: Ինֆլացիան արհեստական շնչառությունն է: Օրինակ՝ երբ մարդն ինքն իրեն ասում է, որ նա կհաշվի տաս ներշնչում և տաս արտաշնչում, կամ որ նա կներշնչի աջ քթածակով և կարտաշնչի ձախով. սա արվում է ձևաչափային ապարատով: Եվ այս շնչառությունը տարբեր է, քանի որ շարժման կենտրոնը և ձևաչափային ապարատը գործում են մկանների տարբեր խմբերի միջոցով: Այն մկանների խումբը, որով գործում է շարժման կենտրոնը ոչ մատչելի է, ոչ էլ ենթակա

ձևաչափային ապարատին: Սակայն այն դեպքում, երբ շարժման կենտրոնը ժամանակավորապես կանգնում է, ձևաչափային ապարատը ազդեցություն է ձեռք բերում մի խումբ մկանների վրա, որոնց օգնությամբ այն կարող է շնչառական մեխանիզմը շարժման մեջ գցել: Բայց իհարկե դրա աշխատանքը ավելի թերի կլինի, քան շարժման կենտրոնի աշխատանքը, և այն երկար չի կարող շարունակվել: Դուք կարդացել եք “յոզի շնչառության” վերաբերյալ գիրքը, դուք նաև լսել եք կամ նորից կարդացել եք ուղղափառ վանքերում գոյություն ունեցող “մտավոր աղոթքի” հետ կապված հատուկ շնչառության մասին: Այդ ամենը նույն բանն է: Ձևաչափային ապարատից ընթացող շնչառությունը շնչառություն չէ, այլ “ինֆլացիա”: Իմաստն այն է, որ եթե մարդն այսպիսի շնչառությունը բավականին երկար և հաճախ է իրականացնում, ապա շարժման կենտրոնը, որը պարապ է մնում այս ժամանակահատվածում կարող է հոգնել ոչինչ չանելուց և սկսել աշխատել՝ ձևաչափային ապարատին նմանակման շրջանակներում: Եվ սա իրականում երբեմն տեղի է ունենում: Բայց որպեսզի սա տեղի ունենա, շատ պայմաններ են հարկավոր. ծոմ և աղոթք է հարկավոր և քիչ քուն և մարմնի համար բոլոր տեսակի դժվարություններ և բեռ: Եթե մարմնին լավ եք վերաբերվում, սա չի կարող տեղի ունենալ: Կարծում եք ուղղափառ վանքերում ֆիզիկական վարժություններ չկան: Լավ, փորձեք իրականացնել հարյուրավոր տեսակի ուժասպառություններ համաձայն բոլոր կանոնների: Ձեր մեջքը այնպիսի ցավ կունենա, ինչպիսի դուք երբեք չեք ունենա որևէ տեսակի մարմնավարժություններից:

Այս ամենը մեկ նպատակ ունի. շնչառությունը համաձայնեցնել ճիշտ մկանների հետ, այն հանձնել շարժման կենտրոնին: Եվ ինչպես ասեցի, հաճախ սա կարող է հաջող լինել: Բայց միշտ կա այն ռիսկը, որ շարժման կենտրոնը կարող է կորցնել իր պատշաճ աշխատելու սովորությունը, և քանի որ ձևաչափային ապարատը չի կարող մշտապես աշխատել (օրինակ քնելու ընթացքում) և շարժման ապարատը չի ցանկանում այլևս աշխատել, ապա մեքենան կարող է հայտնվել շատ ցավալի իրավիճակում: Մարդ կարող է անգամ մահանալ շնչառության դադարումից: Մեքենայի գործողությունների շնչառական վարժությունների միջոցով ծառայող անկազմակերպվածությունը համարյա անխուսափելի է, երբ մարդիկ իրենք իրենցով գրքերից փորձում են անել «շնչառական վարժություններ»՝ առանց պատշաճ հրահանգների: Մոսկվայում ինձ մոտ էին գալիս շատ մարդիկ, որոնք լիովին հակակազմակերպել էին իրենց մեքենայի ճիշտ գործունեությունը այդպես կոչված «յոզի շնչառության» միջոցով, որն իրենք սովորել էին գրքերից: Այդ գրքերը, որոնք այդպիսի վարժություններ են խորհուրդ տալիս, մեծ վտանգ են ներկայացնում:

Շնչառության վերահսկումը ձևաչափային ապարատից շարժման կենտրոն երբևիցե հնարավոր չէ տեղափոդել սիրողական մեթոդներով: Որպեսզի այս տեղափոխումը տեղի ունենա օրգանիզմը պետք է վերջին աստիճանի լարվածության վրա գտնվի, բայց մարդն ինքն իրեն երբեք չի կարող սա անել:

Ինչպես արդեն նշել եմ, գոյություն ունի շնչառության երրորդ ձևը՝ շարժման միջոցով շնչառությունը: Այս երրորդ ձևը պահանջում է մարդկային մեքենայի վերաբերյալ մեծ գիտելիքներ, և այն գործածվում է դպրոցներում, որոնք ղեկավարվում են շատ կրթված մարդկանց կողմից: Սրա հետ համեմատ բոլոր այլ մեթոդները “տնական” են և անվստահելի:

Այս մտքի հիմնարար գաղափարն այն է, որ որոշակի շարժումներ և դիրքեր կարող են առաջացնել ցանկացած ձեր նախընտրած շնչառությունը, և դա նույնպես նորմալ շնչառություն է, այլ ոչ թե «ինֆլացիա»: Դժվարը իմանալն է, թե որ շարժումները և որ դիրքերը ինչպիսի շնչառություն են առաջացնում *ինչպիսի մարդկանց մոտ*: Վերջինս հատկապես կարևոր է, քանի որ մարդիկ այս տեսանկյունից բաժանվում են որոշակի հստակ թվի ձևերի, և ամեն տեսակ պետք է ունենա իր որոշակի շարժումները նույն շնչառությունը ստանալու համար, քանի որ նույն շարժումը տարբեր շնչառություններ է առաջացնում տարբեր տիպերի մոտ: Մարդն, ով գիտի այն շարժումը, որն իր մեջ ստեղծում է այս կամ այն շնչառությունը արդեն կարող է կառավարել իր օրգանիզմը և կարող է իր նախընտրած պահին շարժման մեջ դնել մեկ կամ մյուս կենտրոնը կամ աշխատող մասը կանգնեցնել: Իհարկե այս շարժումների վերաբերյալ գիտելիքները և նրանց հսկելու կարողությունը, ինչպես ամեն ինչ այս աշխարհում, իր մակարդակներն ունեն: Մարդը կարող է քիչ թե շատ գիտենալ և լավ կամ վատ օգտագործել իր գիտելիքները: Այս պահին միայն կարևոր է հասկանալ սկզբունքը:

Եվ սա հատկապես կարևոր է կապված մարդու կենտրոնների բաժանման ուսումնասիրության հետ: Սրա վերաբերյալ արդեն մի քանի անգամ խոսել ենք: Պետք է հասկանաք, որ ամեն կենտրոն բաժանվում է երեք մասի՝ համապատասխանելով կենտրոնների սկզբնական բաժանմանը՝ «մտածողության», «զգացմունքային» և «շարժման»: Նույն սկզբունքով այս մասերից յուրաքանչյուրն իր հերթին բաժանվում է երեք մասի: Ավելին, ի սկզբանե ամեն կենտրոն բաժանվում է երկու մասի՝ դրական և բացասական: Եվ ամեն մասում «շրջանակների» խմբեր կան, որոնք միմյանց հետ կապակցված են՝ ոմանք մի ուղղությամբ, մյուսները՝ մյուս: Սա բացատրում է մարդկանց միջև եղած տարբերությունները. այն, ինչ կոչվում է «անհատականություն»: Իհարկե սրանում ընդհանրապես անհատականություն չկա, այլ ընդամենը շրջանակների և գուգորդումների տարբերություն»:

Զրույցը տեղի ունեցավ այգում գտնվող մեծ մի սենյակում՝ Գ.-ի կողմից դերվիշ թեկկեյի նորաձևությամբ զարդարված:

Բացատրելով շնչառության տարբեր ձևերի իմաստները՝ նա սկսեց բաժանել ներկաներին երեք խմբի ըստ տիպերի: Մոտ քառասուն մարդ կար այնտեղ: Գ.-ի միտքն այն էր, որ ցույց տար, թե ինչպես նույն շարժումները տարբեր մարդկանց մոտ առաջ են բերում տարբեր «շնչառական պահեր», օրինակ՝ շատերի մոտ ներշնչումը, մյուսների մոտ արտաշնչումը, կամ ինչպես տարբեր շարժումները և դիրքերը կարող են ստեղծել միևնույն շնչառական պահերը՝ ներշնչում, արտաշնչում և շնչառության կանգնեցում:

Սակայն այս փորձը չավարտվեց: Եվ որքանով տեղյակ եմ, Գ.-ն այլևս դրան չանդրադարձավ:

Այս ժամանակաշրջանում Գ.-ն ինձ մի քանի անգամ հրավիրեց՝ Պղիողեում ապրելու: Բավականին գայթակղություն կար սրանում: Սակայն չնայած իմ՝ Գ.-ի գործում ունեցած հետաքրքրությանը, ես չէի կարողանում այս աշխատանքում ինձ համար տեղ գտնել, և ոչ էլ հասկանում էի դրա ուղղությունը: Միևնույն ժամանակ ես չէի կարող չտեսնել, ինչպես տեսնում էի Եսսենտուկիում 1918թ.-ին, որ գործի կազմակերպան մեջ բազմաթիվ կործանարար մասնիկներ կային և որ այն պետք է քայքայվեր:

1923թ.-ի դեկտեմբերին Գ.-ն կազմակերպեց դերվիշ պարերի, ութմային շարժումների և բազմաթիվ այլ վարժությունների ցուցադրում Շամզ Էլիզեի թատրոնում՝ Փարիզում:

Այս ցուցադրումներից հետո 1924թ.-ի հունվարին Գ.-ն իր աշակերտների մի մասի հետ մեկնեց Ամերիկա՝ այնտեղ դասախոսություններ և ցուցադրումներ կազմակերպելու մտադրությամբ:

Ես Պղիողեում էի նրա մեկնելու օրը: Եվ սա ինձ հիշեցրեց նրա Եսսենտուկիից մեկնելը 1918թ.-ին և այն ամենը, ինչ դրա հետ կապված էր:

Լոնդոն վերադառնալիս ես բոլոր նրանց, ովքեր հաճախում էին իմ դասախոսությունները, հայտարարեցի, որ իմ աշխատանքը ապագայում ընթանալու է Էպպես անկախ, այնպես, ինչպես սկսվել էր Լոնդոնում 1921թ.-ին: